## 19. ՄՈՒՆՔ ԻՎԻԼ ԸՆՔ

*Մին տղա վըեր շատ մծանում ա, մարը սաղ օրն իրեանըյեր խոսում ա, թա խե՞ չըս փսակվում։ Տա թա՝ ա՛ մար, ըխշարքեն կնանեքյը լոխ փուչացած ըն, վըեչ մինն էլլա ծիրա̈ն հա̈լին չի, հունց փսա՞կվեմ։ Մարը թա՝ չորս ըտըժանե մին տոն շինի, եռ քաշի ըտաժումը կապրեմ, տուք կըպիցրանաք չորսինչի ատաժը, կնգանըտ ընդեղ կըպահես, ես ըստեղ քյինո̈ղ-կյըվողեն կըեշիմ, վըեչ մին պեն էլ կարել չի անե։ Տղան տի յել անում ա։ Հենգյ ըտըժանե տոն ա շինո̈ւմ, քաշի ըտաժումը մարն ա կենում, ինքյն էլ փսակվում, պիցըրանո̈ւմ չորսինչի ատաժը։ Կնգանը թողում չի, վըեր ընդեղան քշանա, մարն էլ թողում չի, վըեր քյինո̈ղ-կյըվող ինի։*

*Մին քանի ամեռ էտ կնեգյը տըեղ ապրում ա։ Մին օր էլ եշում ա, տըեսնում ծ̈րա̈նց տանան խիլլա̈ հեռու մին այըեջա̈ռ օվշար մարթ, աչկեն մինն էլ քոռ, համ պատ ա շարում, համ նուխուդ ա ջուրան մին-մին տա̈ւս օնում, թող անում, քցո̈ւմ պերա̈նըը։ Կնգանը մտկավն անց ա կենում, թա հինչ ջուրա յել օղում ա ինի, էտ օվշարեն պիտի պիրիմ կոշտըս։*

*Էքյսի օրը կնեգյը սոտ տըեղան հիվըընդանում ա։ Վըեր տըա հա̈լը հըըցընում ըն, սա թա՝ ինձ էսհինչ տատմարը կըկարե ճար անե։ Տըտմարեն ծեն ըն տամ կոշտը, վըեր մենակ ըն մնամ, տա̈ւս ա օնում քսան վըեսակե տամ, թա հինչ ջուրա օղում ա ի-*

նի, էն քոռ օվչարեն պո̈րո̈ւմ ըս կոշտըս։ Տատմարը հրցընում ա. թա պա հո՞նց, տա թա՝ ես հըլմ սուտըսուտ էրկան կըհիվընդանամ, տու ճիլը-ճիլլի կըքյինա̈-կյա̈ս, խոնան էլ քեզ կըքուշըցնեմ ըստեղ, էն ուվչարեն կըտինիս սընդողումըտ, հըմբալեն չելա̈կ տալ տաս, պիրիս ըստեղ։ Տի յել անում ըն։ Տատմարը վըեր շատ քյինա̈մ ա-կյամ, մին օր էլ թա՝ արտեն վըննըհան ըմ իլա̈լ, իլա̈ծչիլածըս մին քանի լանթ ա, մինդյել մին սանդող, թող հըվաքեմ, պիրիմ կնգանըտ ութաղեն մին բուրջը՝ մինչև կըլըձ̈վըցընեմ։ Մարթը թա՝ պո̈րո̈ւմ ըս, պեր։

Տատմարը քյինամ ա էտ քոռ ուվչարեն տինո̈ւմ ո̈րա̈ն սնդողումը, հըմբալեն չելա̈կ տալ տամ, պո̈րո̈ւմ տո̈ւս օնում չորսինջի աստածը։ Մարթը վըեր սանդողը տըեսնում ա, կլխու վա ինգյո̈ւմ մաշին հինչ կա. տոնը-տեղը թողում ա, կլո̈խ յոր օնում, քյինա̈մ. վըեր կորչի։ Շատ ա քյինամ, թա խրեգյ, տո̈ւս ա կյամ մին դո̈ւզ տըեղ, պիցըրա̈նո̈ւմ մին ծառ, օղում ա չորս ընգյո̈ւնին եշի, տըեսնա հինչ կա, հինչ չի կա։ Ծառան կլխուվըեր եշում ա, տըեսնում տափեն տական ա, թա հիշտըղա, մին ախճիգյ, մինգյել մին շատ ղա̈շա̈նգյ տղա տո̈ւս եկեն, մտեն ծառեն տակը... Խիլլա վըեր անց ա կենում, էտ տղան քյինա̈մ ա, մինգյել էրկու մազ ո̈ւրո̈ւր ա քաո̈ւմ, մին ա̈յրեչառ օշափ ա տո̈ւս կյամ, կյամ ըխճըկանը կոշտը... տահանք վըեր ըսկըսում ըն քիսփիսի անելը, տա կլխու վա ինգյո̈ւմ, վըեր էտ օշափը ըխճըկանը մարթն ա, էն ջա̈հիլ տղան էլ սիրա̈կանն ա։ Տրանս խոր օշափը քունավ ա հնցընում, ախճիգյն էլ իլիթ-վիլա̈թ ա ինո̈ւմ, էլ ուրվամ չի։ Տա ծառան վըեր ա կյամ, ուշափեն զո̈ւրթնըցնում, թա տու իմ մըեծ ախպըերըս ըս, իմ դարդըս էլ քու դա̈րդա̈տ ա, ես հիշտեղ քյինա̈լի ինինքյ, մին տըեղ քյինա̈նք, հինչ վըեր ընելի ինինքյ, ըիրա̈պի անենքյ։ Օշափը մնամ ա զըրմացած։ Հըրցընում ա, թա պենը հինչումն ա՞, տա թա՝ եք քյինա̈նք մըեր տոն, լոխ նաղլը կանեմ։

Օշափը տրա նհետ քյինա̈մ ա ո̈րա̈նց տոն։ Մարթը, թա՝ ա՛ կընեգյ, վեց հոքու պադրաստութըյուն ըս տըեսնում։ Կնեգյը տի յել անում ա։ Օշափը նան էտ մարթը վըեր ըստոլեն կոխկեն նստում ըն, տա ուշափեն թա՝ մազերը ո̈ւրո̈ւր քսի, կնեգյըտ կյա։ Օշափն էրկու մազ ո̈ւրո̈ւր ա քաո̈ւմ, կնեգյը տո̈ւս ա կյամ կոխկը։ Էտ մարթն ուշափեն կընգանը, թա մազերն ո̈ւրո̈ւր քսի, էն ջա̈հիլ տղան կյա։ Տա թա հի՞նչ մազ, հի՞նչ տղա, նա յել թա՝ լա̈վ, արտեն ամեն հինչ գյո̈նդո̈ւմ ըմ, քսի, թող կյա։ Տա մազերն ո̈ւրո̈ւր ա քաո̈ւմ, էտ ջա̈հիլ տղան տո̈ւս ա կյամ կոխկը։ Խոնան էլ թա՝ ա՛

կնեգյ, դն մե՞ննգյ տղըմարթու մնան սանդողը պեց ըրա։ Կնեգյը ւանդողը պեց ա անում, սընդողան էն քոռ օվշարը տուս ա կյամ, կնդանը կոխկեն նատում։

էտ մարթը ուշափեն թա՝ մունք արտեն ըստեղ խվլիլ ընք, եք կլոխ յոր օնենքյ, կորչինքյ։ էտ մարթը նան օշափը կլոխ ըն յոր օնում, քյինձում կորչում։ Տա՞անք մնամ ըն տըեղ քյեփ ընելիս։

